



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՄԱՐՏ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՄԱՂՍՈՍ 37

ԶԱՐԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԻՆԵՐՈՒՆ ՎԱԽՃԱՆԸ

Սիրտդ մի նեղեր չարերուն համար,
ոչ ալ նախանձէ անօրէն մարդոց:
Որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խոտի պէս,
պիտի չորնան այնպէս՝ ինչպէս դալար բոյսը կը չորնայ:
Տիրոջ վստահէ եւ բարիք ըրէ,
որպէսզի երկրի վրայ ապրիս եւ ապահովութիւն վայելես:
Միակ ուրախութիւնդ Տէրը թող ըլլայ,
եւ ինք սրտիդ բոլոր բաղձանքները պիտի տայ:
Քու կեանքդ Տիրոջ յանձնէ,
եւ վստահ եղիր, ան ամէն ինչ պիտի տնօրինէ:
Լռութեամբ հնազանդէ Տիրոջ,
սիրտդ մի՛ նեղեր անոնց համար՝
որ անիրաւ յաջողութեան կը հասնին,
եւ անոնց համար որոնք չարիք կը նիւթեն:
Զսպէ բարկութիւնդ, մէկ կողմ դիր զայրոյթդ.
սիրտդ մի նեղեր, որպէսզի դուն ալ չարիք չգործես:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ թո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ թո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ԴԻՆԱ ԿԸ ԲՈՆԱԲԱՐՈՒԻ (34:1-31)

Հեղափոխական քիչիկ մըն ալ փարօրինակ հափուած մըն է 34-րդ գլուխը, որ կը խօսի Դինայի բռնաբարումի մասին: Այս հափուածը եւ նոյնանման հափուածներ երբ կը յիշատակուին Աստուածաշունչին մէջ, մի գուցէ փարօրինակ թուի, սակայն կը ներկայացնէ մարդկային բաժինը, այնպէս ինչպէս որ է մարդը: Այսինքն ոչ միայն մարդու լաւ կողմերը, այլ նաեւ՝ իր թերութիւնները, որպէսզի անով ընթերցողը անդրադառնայ, որ եթէ երբեք նոյն ընթացքի մէջ է առիթ ըլլայ իրեն սրբագրութեան:

Ամէն պարագայի, հափուածը մեզի կը ներկայացնէ թէ ինչպէս Յակոբի աղջիկը Դինա երբ կ'ուզէ հեռանալ հորը փունէն երթալու եւ փեսանելու այն երկրին աղջիկները, եւ ահա կը բռնաբարուի: Այս բաժնին համար Կիւրեղ Աղեքսանդրացի հայրապետ այլաբանօրէն այսպէս կը բացատրէ ըսելով, որ «եթէ երբեք կ'ուզենք սպահով մնալ, պէտք չէ լքենք մեր հորը փունը, այսինքն Աստուծոյ փունը»: Միւս կողմէ, հակառակ իրողութեան, Միւլթմի հոգին Դինայի յարեցաւ ու սիրեց զայն, եւ ուզեց օրինաւորապէս զինք առնել իբրեւ կին: Ահա այս միջոցին է, որ Յակոբի զաւակները՝ Շմաւոն եւ Ղեւի իրենք կ'որդեգրեն ծուռ կերպ մը, որպէս հարցին լուծում: Որովհետեւ անոնք կը փորձեն առիթը շահագործել եւ Միւլթմի ունեցած հարստութիւնը ձեռք ձգել: Հափուածը այսպէս կ'ըսէ. «Յակոբին զաւակները խաբէութեամբ պատասխան փութին»:

Շմաւոնի եւ Ղեւի ըրածը երբեք ալ հաճելի չեղաւ Յակոբի համար, ընդհակառակը անոնց ըրածը Յակոբ կը դատապարտէ, եւ քիչ մը անդին, երբ իր օրհնութիւնը պիտի փար իր զաւակներուն, այսպէս կ'արտայայտուի Շմաւոնի եւ Ղեւիի համար. «Մուրերնին անիրաւութեան գործիքներ են: Իմ հոգիս անոնց խորհուրդներուն մէջ թող չմտնէ, իմ պապիս անոնց ժողովին հետ թող չմիանայ. վասնզի իրենց բարկութիւնովը մարդ սպաննեցին եւ իրենց կամապաշտութիւնով ցուլի ջիղ կտրեցին: Անիծեալ ըլլայ անոնց բարկութիւնը, վասն զի խիստ էր, ու անոնց սրամտութիւնը վասնզի սաստիկ էր. զանոնք Յակոբին մէջ պիտի բաժնեմ ու զանոնք Իսրայէլի մէջ պիտի ցրուեմ» (Ծննդ 49:5-7): Այս հափուածով ցոյց կը փրուի, թէ անոնք ինչ որ ըրին Յակոբին կամքին հակառակ էր: Յակոբ չ'ուզէր, որ անոնց արարքը իր անունին վրայ բիծ բերէ:

Յաճախ դէպքեր կը պատահին, որոնց հետեւանքը, արդիւնքը յետոյ կ'երեւի: Ահա այս իսկ իմաստով Յակոբի զաւակներուն արարքներն ալ, ի մասնաւորի Ռուբէնի, Շմաւոնի եւ Ղեւիի, պատճառ կը դառնան որպէսզի անոնցմէ առնուի անդրանկութեան իրաւունքը: Ռուբէնի պարագային ինք էր անդրանկը, բայց ան կը զրկուի այդ իրաւունքէն, որովհետեւ հորը՝ Յակոբի անկողինը մտնելով պիտի պղծէ զայն: Նոյնպէս Շմաւոնի եւ Ղեւիի պարագային, անոնք եւս իրենց կատարած յանցանքին պատճառով պիտի զրկուին անդրանկութենէն: